

ՆՈՐ ՍՏԱՅԱԾ ԳՐՔԵՐ

Յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում Տփլիսի Հրատարակական Ընկերութեան յանձնաժողովի յարգելի անդամներին, որ ի նկատի առնելով ընկերութեան որոշումը, բարեհաճել են Մայր Աթոռի մատենադարանի անունով ուղարկել արդէն «Արարատ»ի նախկին համարներում յիշուած գրքերի երկրորդ օրինակները ևս, միջգեռ առաջ մի մի օրինակ էին ուղարկել անկասկած թիւրիմացութեամբ: Այդ գրքերի մէջ նոր է հետեւեալը.

№ 56. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ ԳԻՒԲ Գ.

Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից:

Ժողովեց Գարեգին սարկաւազ Յովսէփեանց: Գինն է. 50 կոպ. թիֆլիս. 1893. երկու օրինակ:

Սոյն գիրքը «Սասմայ ծռեր» գրքի երկրորդ հատորն է, սակայն ոչ ըստ բովանդակութեան, այլ ըստ տեսակի, որովհետեւ առաջինի մէջ մեզ տուած է մի ամբողջ վէպ, իսկ երկրորդ հատորի մէջ ժողովրդական բանահիւսութեան փշրանքներն են՝ ոտանաւոր և արձակ շարադրութեամբ: Այդ թանկագին բիւրեղները շնորհունակ ժողովը հետեւեալ մասերի է բաժանել:

1. Ժողովրդական երգեր թւով 14 էջ, 3—29.

2. Ժողովր. առակներ էջ 30—31.

3. Աւանդութիւններ էջ 32—76.

4. Ապարանի կեանքից յօգուածիկը սարկաւազինն է, որին կցել է նաև Ապարանցոց բանահիւսութիւնից կտորներ: Գրքի

երկրորդ մասում դրած են Հերեթիկներ և վերջը մի բառարան ու յաւելուած:

Այս ժողովածուի մասին էլ մենք նոյնը պիտի ասենք, ինչ որ միանգամ արդէն ասել ենք նրա «Սասմայ ծռերի» մասին, որ ոչ մի կերպ չի նկատուում թէ ժողովողը առաջնորդուել է մի յայտնի ծրագրով. օրինակ միանգամ նա անծանօթ ժողովրդական բառերի բացատրութիւնը բնագրի ներքեւումն է դնում, նոյն գրքի մի ուրիշ մասի համար առանձին բառարան է կազմում ապա բաւականացել է միայն մի երկու երգի համար ծանօթութիւններ դնել, մինչդեռ շատ ցանկալի է, որ նա այդ արած լինէր իւրաքանչիւրի համար:

Ապա յատուկ շնորհակալութեամբ տոացուել են նաև հետևեալ գրքերը:

Ա. Ղ. ՕԹ. Ք. Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

«Որ օրհնես զայնոսիկ» ի յիսուն լեզուս սեպհական տառիւք իւրաքանչիւր լեզուէ. Բ. տպագրութիւն, ջանիւ և ինամուլ Հ. Գ. Վ. Գալէմբարեանի: Վիեննա 1893:

Այս գիրքը իւր փառահեղ տպագրութեամբ դարձեալ մի փայլուն ապացոյց է, թէ ինչպէս Վիեննայի միաբանները ամեն ջանք գործ են դնում դարուս յառաջընթաց քայլերից յետ չի մնալ և գիտեն տպագրական արհեստը — գեղարուեստի աստիճանի հասցնել: Գիրքը հրատարակուած է Հռոմի Պապին իբրև ընծայ ներկայացնելու նրա յիսնամեայ եպիսկոպոսութեան տօնախմբութեան առթիւ և ինչպէս արդէն վերնագիրը ցոյց է տալիս, պարունակում է իւր մէջ մեր պատարագամատոյցի յայտնի աղօթքը 50 լեզուներով թարգմանուած՝ այդ լեզուները իմացող հռչակաւոր մասնագէտների կողմից և տպագրուած են այն տառերով, ինչ տառեր գործադրուում են այդ լեզուների համար. ուստի իրաւացի է, որ նա կարող է նաև սրահնելու, ընդունելութեան սենեկաց, ժողովարանաց և ամեն մատենադարանաց կարևոր ու յարմար զարգե-